Doi: 10.56737/2953-7843-2023.06-106

ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԵՒ ԲԵՀԲՈՒԹՅԱՆՆԵՐԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ[1]

ՆԱԽԱԲԱՆ

1814–1828 թթ. Ներսես Աշտարակեցին (Ամենայն Հայոց կաթողիկոս 1843–1857 թթ.) առաջնորդել է Վիրահայոց թեմը[2]։ Նրա թեմակալության առաջին տարիները, սակայն, ուղեկցվել են տեղի համայնքի որոշ ներկայացուցիչների հետ ունեցած տարաձայնություններով եւ անգամ սուր հակասություններով, ինչը լայն արձագանք էր գտել ռուսահայ իրականության մեջ։ Թեեւ այդ իրադարձություններին անդրադարձել է ԺԹ. դարի հայ նշանավոր պատմաբան Ալեքսանդր Երիցյանը (1841–1902)[3], օգտագործելով արխիվային մեծաքանակ վավերագրեր, բայց եւ այնպես մեր ուսումնասիրությունների ընթացքում ուշադրություն գրավեցին մի շարք վավերագրեր, որոնք, կարծում ենք, ամբողջացնում են այդ հակամարտության ընդհանուր պատկերը[4]։ Դրանք, մասնավորապես, հայոց կաթողիկոսին, ռուս կառավարչապետին, ռուսահայ հայտնի գործիչներին եւ Երեւանի խանին հասցեագրված նամակներն են, որոնք փաստագրական հարուստ նյութ են բովանդակում։ Այդ նամակներում Ներսես Աշտարակեցին հաղորդում է ուշագրավ մանրամասներ, որոնք սկզբնաղբյուրային կարեւոր տեղեկություններ են պարունակում խնդրո առարկա հարցի վերաբերյալ, ինչպես նաեւ բացահայտում են թեմակալի գործադրած ջանքերը վիրահայոց համայնքի պառակտումը վերացնելու եւ խա-

---

[1] Ստացվել է 23.05.2023, գրախոսվել է 30.05.2023։ էլ. հասցե՝ h.ohanyan@matenadaran.am։*

[2] Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., Սբ. էջմիածին, 2001, սյունակ 3947–3948։

[3] Այդ հակամարտությունը, «հետզհետէ մեծանալով, դարձաւ մի սարսափելի կռիւ, ոչ պակաս, քան Դաւիթ-Դանիէլեան շփոթը» (տե՛ս Ալ. ԵՐԻՑԵԱՆ, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX դարում, Մասն Ա. (1800–1832 թթ.), Թիֆլիս, 1894, էջ 74)։

[4] «Մեր մեծաքանակ ժողովածուի մէջ գտնվում են մօտ 200 գրութիւններ, որոնք վերաբերում են այդ կռուին».– գրում է Ալ. Երիցյանը՝ նշելով նաեւ, որ իրեն չի հաջողվել անդրադառնալ բոլոր վավերագրերին (տե՛ս Ալ. ԵՐԻՑԵԱՆ, նշ. աշխ., էջ 75)։

ղաղություն հաստատելու ուղղությամբ։ Ըստ այդ վավերագրերի՝ Ներսես Աշտարակեցին Եփրեմ Ա. Զորագեղցի կաթողիկոսի աջակցությամբ փորձել է բարենորոգել հոգեւոր-եկեղեցական գործերը թեմի ներսում, իսկ ռուսահայ գործիչների միջոցով փորձել է ազդել Բեհբությանների վրա։

Ա. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՓՐԵՄ Ա. ԶՈՐԱԳԵՂՑՈՒՆ

Համայնքի հոգեւոր գործերում Ներսես Աշտարակեցու հաստատակամ քայլերը եւ ռուսական իշխանությունների պահանջով սկսված եկեղեցական գույքի հաշվառումը թեմակալի դեմ են տրամադրում վրացահայ ազդեցիկ իշխաններին՝ Բեհբությանների գլխավորությամբ[5]։ Հակասություններն սկսվում են Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու իրադարձություններով[6]։ Բացի այդ՝ օգտվելով ռուսական իշխանությունների առաջադրած պահանջներից[7]՝ Ներսես Աշտարակեցին սկսում է հաշվառել եկեղեցական հասույթները՝ ներկայացնելով այն որպես եկեղեցու բարօրությանն ուղղված քայլ, մինչդեռ գույքագրման հարցում նրա հակառակորդներն օգտագործում են այդ պարագան՝ թեմակալ առաջնորդին մեղադրելու համար[8]։

Անդրադառնանք որոշ նամակների, որոնք բացահայտում են թեմակալի գործունեության կարեւոր դրվագները։ Այսպես՝ 1816 թ. մայիսի 3-ին, երբ համայնքում հակասությունները դեռեւս բորբոքված չէին, Ներսես Աշտարակեցին եկեղեցական մի կարեւոր բարեփոխում է նախաձեռնում, որի առնչությամբ ծավալուն գրություն է ուղարկում Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա. Զորագեղցուն՝ ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով թեմում տիրող վիճակը եւ շարադրելով բարեփոխումներին առնչվող իր մոտեցումները։

---

[5] *Բեհբությանների նշանավոր տոհմը Վրացական թագավորությունում ժառանգաբար վարել է Թիֆլիսի կառավարչի պաշտոնը, իսկ Ռուսական կայսրությունում հայտնի էին անվանի ռազմական գործիչներ Վասիլ եւ Դավիթ Բեհբությանները։*

[6] *Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու ավագ քահանա տեր Հակոբի մահից հետո պայքար է սկսվում՝ նրա ծուխն առաջնորդելու հարցի հետ կապված։ Այդ պայքարին միջամտում են Բեհբությանները՝ միջնորդելով թեկնածուներից մեկի օգտին (տե՛ս* Ալ. Երիցեան, *նշ. աշխ., էջ 100–101)։*

[7] *Տե՛ս* В. Тунян, Католикос всех Армян Епрем I Дзорагехци (1809–1830), Св. Эчмиадзин, 2018, *էջ 87։*

[8] *Անդ, էջ 102։*

Նա անդրադառնում է եկեղեցական հասույթների հավաքագրման գործին՝ նկարագրելով Գորի քաղաքում իր ունեցած դժվարությունները. «....նախ յամառեալ մնան, թէ օրէնք նուիրականութեան է մի անգամ յ7 տարւոջ եւ ոչ կանուխ, քան զայն եւ այսպիսեօք ահա պարտաւորեալ ի հոգն մշակութեան»[9]։ Ապա գրում է, որ իրեն ի վերջո հաջողվել է «....զմինն յառաջ ընծայել՝ ձերամբ քահանայապետական բարձրութենէ, զի որպէս եւ պատշաճին իցէ՝ մշակեսցի բարձրագոյն ձերով զօրութեամբ»[10]։ Այդ ընթացքում Թիֆլիսում տեղի են ունենում Նորաշեն եկեղեցու նշված դեպքերը, ինչի վերաբերյալ եւ Ներսես Աշտարակեցին մանրամասն տեղեկացնում է կաթողիկոսին[11]։ Սակայն, ինչպես նկատվում է նամակից, Բեհբությունների միջամտության պատճառով թեմակալին չի հաջողվել լուծել այդ խնդիրը։ Ուստի նման դեպքերը բացառելու եւ խնդիրը կանոնավորելու նպատակով Ներսես Աշտարակեցին ճիշտ էր համարում կաթողիկոսական կոնդակ ստանալը. «Հարկ է, զի գրութիւն ձեր գրեսցէ զկոնդակ համաձայն կանոնաց, թէ զիարդ զժողովուրդն Աստուծոյ եւ եկեղեցւոյ սրբոյ նորա յանդգնի քահանայն անուանել իւր ժառանգութիւն եւ զիարդ համարձակի կտակել ըստ հաճոյս իւր այլոց զժողովուրդն, որ պատկանեալ է միմիայն Աստուծոյ»[12]։ Դա նշանակում էր, որ այդ դեպքում ծուխը փոխանցելու հարցը կորոշվեր ոչ այլ կերպ, քան թեմակալի համապատասխան նշանակմամբ, իսկ դա կնպաստեր այն բանին, որ համայնքը զերծ կմնար նման իրավիճակներից։

Շարունակելով կաթողիկոսին ներկայացնել հոգեւոր թեմի հետ կապված խնդիրները եւ նկատի ունենալով Նորաշենի միջադեպը՝ Ներսես Աշտարակեցին պնդում է. «....զի խափանեալ եղիցի այս հնացեալ անկանոն սովորութիւն»։ Թեմակալի մոտեցումը այդ հարցում միանշանակ էր. հոգեւորականները պետք է նշանակվեին բացառապես ըստ իրենց արժանիքների, ինչի մասին նա գրում է կաթողիկոսին. «Քահանայ, որ ուսուցանէ զորդին իւր ըստ արժանի քահանայութեան եւ գտցի նա արժանաւոր քահանայութեան, ժառանգեսցէ փոխանակ հօր իւրոյ ի պաշտօնի քահանայութեան զարդիւնսն ժողովրդոյ, իսկ եթէ չիցէ արժանաւոր որդին քահանայի, ժառանգեսցէ արժանաւորն այլ, զի թէ քա-

[9] ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 117, թ. 1ա։
[10] Անդ, թ. 1բ։
[11] ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 117, թ. 2ա–2բ։
[12] Անդ, թ. 3ա։

հանայապետ զիւր քահանայապետութիւն եւ եպիսկոպոսք զիւրեանց եպիսկոպոսութիւնն ոչ կարողանան իբրեւ զիւրեանց ժառանգութիւն թողուլ մերձաւորաց»[13]։

Պետք է նկատել, որ թեմական առաջնորդի այդ հետեւողականությունը հանգեցրեց Բեհբությունների հետ հակասությունների հետագա խորացմանը[14]։ Թեեւ Աշտարակեցին չէր ընկրկում իր դիրքորոշումներում, այդուհանդերձ, ակնկալում էր հայոց կաթողիկոսի աջակցությունը, քանի որ առանց դրա բարեփոխումներ նախաձեռնելը իրատեսական լինել չէր կարող։ Եւ դրա համար նա գրում է. «....եթէ այս կոնդակ արժան համարեսջիք գրել, ինձ թուի, թէ բազում պայծառութեանց եկեղեցւոյն եւ բարեկարգութեանց ժողովրդական կառավարութեանց եղիցի դիւրութիւն, իսկ թէ ոչ, որպէս հաճոյ գուցէ Ձեր տէրութիւն, այն է փառաւորն»[15]։ Բայց դա դեռ ամենը չէ. այդ հարցում նա մտադիր էր ստանալ նաեւ ռուսական իշխանությունների հավանությունը։ Ներսես Աշտարակեցին տեղեկացնում էր վեհափառին, որ «....ըստ կարգի այլոցն, պահանջեցեալ ի կնեազ Գալիցինէն, պարտաւորիմ ես նմա եւս յայտնել»[16]։

Ինչպես երեւում է 1816 թ. հունիսի 15-ին Եփրեմ կաթողիկոսին հղված նամակից, թեմականը, կարծես, բնավ չէր կանխատեսում Բեհբությունների հետ հակասությունների հետագա սրումը։ Համենայնդեպս՝ Թիֆլիսի հետ կապված անհանգստության նշույլներ անգամ չկան այդ նամակում։ Ընդհակառակը՝ նրան ավելի շատ մտահոգում էին իրեն վստահված ընդարձակ թեմի գործունեության առնչվող մյուս վիճահարույց հարցերը. «Մինչեւ ցայժմ բարւոք խաղաղութեամբ համահաւաքեալ զտումար վասն ամենայն յանձնեցելոցն մեզ Վրաստանու, Ղազախու, Շամշադինայ եւ Էլիսավէտապօլսոյ կողմանցն, օտարականաց Փամպակու կողմանց եւս ակն ունիմ ստանալ ի տէր Ղազարէն եւ փութամ ոչ անագան ստանալ եւ առաքել եպիսկոպոսի վիճակինն եւ այնպէս յետ 15-ին օգոստոսի գնալ ի Կախէթ եւ անդ եւս պատրաստել, կանխաւ վերադառնալ աստէն եւ յօրինել զպատասխան կնիազ Գալիցինին եւ այնուհետեւ ազատակամ դիմել ի կողմանս Էլիսավէտապօլսոյ»[17]։ Սակայն,

---

[13] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 117, թ. 3ա-3բ։*
[14] *Մանրամասները տես* Ալ. Երիցեան, *նշ. աշխ., էջ 88–89։*
[15] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 117, թ. 3բ։*
[16] *Անդ։*
[17] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 121, թ. 1ա։*

ինչպես կտեսնենք, հաջորդող իրադարձությունները բոլորովին այլ իրավիճակի առջեւ կանգնեցրին թեմականին, եւ նա արդեն ստիպված էր իր ողջ ուշադրությունը կենտրոնացնել Բեհբությանների վրա։

Խորացող հակասությունների վերաբերյալ հետեւություններ կարելի է անել կաթողիկոսին ուղղված 1816 թ. հուլիսի 6-ի նամակից, որտեղ Ներսես Աշտարակեցին հանգամանալից կերպով անդրադարձել է ստեղծված բարդ իրավիճակի պատճառներին։ Նամակի բովանդակությունից երեւում է, որ այդ պատճառների հիմքում նա առավելապես տեսնում էր թեմական եկամուտներին վերաբերող հարցերը։ Այսպես՝ պարզվում է, որ «....Տէր Յակոբն (Նորաշեն եկեղեցու առաջնորդ.– Հ. Օ.) վախճանեալ եթող վասն թաղման իւրոյ 20 թուման ասեն, այլ վեց թուման յայնմանէ գուցէ դեռ ինքն կենդանի ետուն յաղագս հաստատելոյ զկտակ նորա», սակայն՝ «.... բնաւ փարայ մի ոչ կամեցան մինչեւ ցայսօր մասնակցել արքեպիսկոպոսին, ընդ որում հոգեբաժին կամ այլ արդիւնք սովորականք»[18]։ Ինչպես երեւում է, շատ դեպքերում տեղի հոգեւոր առաջնորդները սեփական հայեցողությամբ են տնօրինել ստացված եկամուտները, որոնք այդպիսով չեն հասել ո՛չ առաջնորդարան եւ ո՛չ Մայր Աթոռ։ Ցավով արձանագրելով այդ փաստը՝ Ներսես Աշտարակեցին կաթողիկոսին է ներկայացնում այլ դեպքեր եւս. «....ի լինելն իմ ի Գօրի, կին մի անյիշատակ վախճանեալ աստէն, խոստովանահայր քահանայն նորա զտունն եւ իբրեւ 40 թուման կոյսն կտակեալ ի վերայ երկուց ծանօթ կուսաց եւ ոչ ազգականց հանգուցելոյն»[19]։ Այն, որ խոսքը մեծ գումարների մասին է, երեւում է հետեւյալ արձանագրումից. «Մին ազգականայ կնոջ վախճանեալ անօրէնութեամբ քահանային, կարծեմ թէ, աւելի քան 500 թուման կայք կերին նորա այլք եւ ցանկ մի ոչ ընկալայ ես կամ Հաղպատէն, որոյ էր վիճակ, եւ ոչ ես Աթոռն», եւ, ի՞նչն է հետաքրքիր, պարզվում է, որ տվյալ քահանան առաջադրվել է «....յուսով աշխարհականաց յորս յինումն զինեքինս կամ սրբօք կամ խնդրանօք»[20]։ Ահա թե ինչու թեմականը ջանքեր էր գործադրում, որ Բեհբությանները եւ մյուս իշխանները զերծ մնան հոգեւորականներին նշանակելու միջամտությունից։

---

[18] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 126, թ. 3ա։*

[19] *Անդ։*

[20] *Անդ, թ. 3բ։*

Բնականաբար՝ Ներսես Աշտարակեցին չէր պատրաստվում հանդուրժել նման երեւույթները, եւ այդ մասին նա անթաքույց գրում է Եփրեմ կաթողիկոսին՝ ասելով, որ ինքը վճռական է տրամադրված. «....խորտակել ամենայն ապստամբ կամաց հոգեւորականաց եւ մարմնաւորականաց իմոյ, յետ որոյ հետզհետէ մատուցել ի հնազանդութիւն ամենայն սանձարձակ քահանայք»[21]։ Նման դիրքորոշմանը, անշուշտ, համառ դիմադրության էին ցույց տալու Թիֆլիսի հայ երեւելիները, եւ դյուրին չէր լինելու լուծման հասնելը։ Ուստի այդ հանգամանքով էր պայմանավորված բարեփոխումների հարցում հայոց հայրապետի անվերապահ աջակցությունն ստանալու անհրաժեշտությունը[22]։

Բ. ՌՈՒՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ. ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼԱՅ ՌՏԻՇՉԵՒԻՆ

1816 թ. հուլիսի 15-ին Բեհբությունների նախաձեռնությամբ կազմվում է Եփրեմ Ա. Զորագեղցուն ուղղված խնդրագիր, որը ստորագրողները խնդրում էին կաթողիկոսից, որպեսզի վերջինս հետ կանչի Ներսես Աշտարակեցուն եւ նրա փոխարեն նշանակի թեմի նոր առաջնորդ[23]։ Փաստացի դրանով խնդիրը դուրս է գալիս ներհամայնքային տիրույթից։ Չենք կարծում, թե ստեղծված իրավիճակը կարող էր անակնկալ լինել Ներսես Աշտարակեցու համար։ Համենայնդեպս՝ այդ քայլին ի պատասխան՝ նա շուտափույթ քայլեր է ձեռնարկում՝ ռուսական իշխանությունների աջակցությունն ստանալու ակնկալիքով։

1816 թ. հուլիսի 19-ին թեմական առաջնորդը ծավալուն գրությամբ դիմում է Կովկասի այն ժամանակվա կառավարչապետ Նիկոլայ Ռտիշչեւին։ Նախ՝ անդրադառնում է իր դեմ ուղղված դժգոհությունների պատճառներին. «Թիֆլիսում գտնվող Կոլեգիալ խորհրդական իշխան Դարչի Բեհբութովը իմ նկատմամբ ուժեղ ատելությամբ է լցված միայն նրա համար, որ ես հոգեւոր կոչում չեմ տալիս իր երաշ-

---

[21] *Անդ։*

[22] *1816 թ. հուլիսի 20-ին Եփրեմ կաթողիկոսը կոնդակով մերժում է ծխատիրության մասին ժառանգական իրավունքի գոյությունը (տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Գ., սյունակ 3953)։*

[23] Ալ. ԵՐԻՑԵԱՆ, *նշ. աշխ., էջ 106–107։*

խավորած անարժան մարդկանց»[24].– գրում է Ներսես Աշտարակեցին։ Անշուշտ, հոգեւոր գործերին միջամտելու հարցը դեռ կարելի էր համարել համայնքի ներքին խնդիր, սակայն, ինչպես պարզվում է նամակի հաջորդ տողերից, հայազգի իշխանը խոչընդոտներ է հարուցել նաեւ եկեղեցական գույքի հաշվառման խնդրում, ինչն արդեն ուղղակիորեն առնչվում էր ցարական իշխանությունների հետ. «....եւ նրա համար է ատում, որ ուժերիս ներածի չափով փորձում եմ կատարել Ռուսական կայսրությունում օտար դավանանքների գծով կառավարիչ իշխան Գոլիցինի պահանջները»[25].– եզրակացնում է թեմակալը։ Մեր կարծիքով՝ Ներսես Աշտարակեցին այդ հանգամանքը հմտորեն է օգտագործել իր նպատակների իրագործման համար, որի արդյունքը պետք է լիներին ծխական «ինքնավարությունը» վերացնելը եւ ըստ այդմ՝ նյութական միջոցներն ի շահ թեմի եւ Մայր Աթոռի օգտագործելը։ Ակնհայտ է, որ ռուս կառավարչապետի օժանդակությունն այդ հարցում կարող էր վճռորոշ լինել։ Ներսես Աշտարակեցին նշում է, որ Դարչի Բեհբությանի ատելությունը մեղմելու իր բոլոր ջանքերն ապարդյուն են անցել։ Ընդհակառակը՝ վերջինս իր կողմն է գրավել ազգականներին, որոնք բարձր պաշտոններ են զբաղեցնում կառավարման համակարգում[26]։

Ներսես Աշտարակեցին Կովկասի կառավարչապետի ուշադրությունը հրավիրում է մեկ այլ կարեւոր փաստի վրա եւս. Բեհբությաններն ազգաբնակչության ստորագրությամբ խնդրագիր են ուղարկել հայոց կաթողիկոսին՝ անգամ բռնության դիմելով։ Ավելին՝ նա ներկայացնում է ստույգ դեպքեր. «Քաղաքային ոստիկանության ջանքերով տներից եւ խանութներից հավաքում էին վաճառականների եւ արհեստավորների, ստիպում էին ստորագրել»[27]։ Այդպիսով՝ տեղական պաշտոնյաները միգուցե եւ ակամա, փաստորեն, աջակցել էին ստորագրահավաքին։ Նամակի վերջում թեմակալ առաջնորդը հայտնում է եւս մի ուշագրավ տեղեկություն. «Իմ կյանքին վտանգ է սպառնում, ինչի համար խոնարհաբար խնդրում եմ պաշտպանել ինձ օրենքի ուժով»[28]։ Հավանո-

---

[24] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 51, թ. 1ա։*
[25] *Անդ։*
[26] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 51, թ. 1ա։*
[27] *Անդ, թ. 1բ։*
[28] *Անդ, թ. 2ա։*

րեն թեմական առաջնորդն ակնկալում էր, որ Ն. Ռտիշչեւն անհապաղ միջոցներ կձեռնարկի։

Թեեւ վերոնշյալ նամակը լիովին բնութագրում է ստեղծված ծանր իրավիճակը, սակայն պետք է նշել, որ այն սպասված արդյունքը չի ապահովել[29]։ Ուստի Ներսես Աշտարակեցին փորձել է ավելի բարձր ատյանների դիմել։

Գ. ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՒ ՀՈՎԱԿԻՄ ԼԱԶԱՐՅԱՆ

Խնդրին առնչվող ուշագրավ հանգամանքներ են բացահայտվում նաեւ ռուսահայ անվանի գործիչներին ուղղած՝ Ներսես Աշտարակեցու նամակներում, որոնցից հետաքրքրություն են ներկայացնում նամակները՝ ուղղված Հարություն Արարատյանին[30], որը «մուտք ուներ» նախարար Ալ. Գոլիցինի մոտ[31]։

Թեմականը նամակներից մեկում, որ գրել է 1816 թ. օգոստոսի 6-ին, անդրադառնում է իր հոգեւոր առաքելության դժվարություններին եւ Բեհբությանների հետ հակասություններին՝ այդ ամենը պայմանավորելով ռուսական իշխանությունների պահանջներով. «....եւ յաղագս այսորիկ, երբ առաքեցաւ առ մեզ ի նորին պայծառափայլութենէ կնեազ Գօլիցինին յառաջադրութիւն վասն յօրինելոյ զտումարս եկեղեցեաց եւ եկեղեցականաց եւ ժողովրդոց Հայոց եւ այլոց։ Յայսմ օրէ մինչեւ ցայսօր ժամանակի յայտնի ոխակալութեամբ չարացաւ նա (Դարչի Բեհբությանը.– Հ. Ο.) ընդ մեզ»[32]։ Սակայն հաշտվելու բոլոր ջանքերը, վրաց մետրոպոլիտի եւ Ն. Ռտիշչեւի միջնորդությունները անարդյունք էին մնացել[33]։ Ներսես Աշտարակեցին, որոշ մանրամասներ ներկայացնելով Հ. Արարատյանին իր դեմ ուղղված բողոքագրից, նշում է մի կարեւոր հանգամանք. ընդդիմադիրները քայլեր են ձեռնարկել նրա դեմ տրամադրելու նաեւ

---

[29] *Տե՛ս* Բ. Тунян, *նշ. աշխ., էջ 91։*

[30] *Հարություն (Արտեմի) Արարատյանը կառավարական շրջանակներում հայտնի էր 1813 թ. Պետերբուրգում հրատարակած* «Жизнь Артемия Араратского» *հուշագրությունով, որում արտացոլված են ժամանակի հայ իրականության եւ առօրյայի վերաբերյալ ուշագրավ մանրամասներ։*

[31] *Թեեւ Ալ. Երիցյանն իր գրքում հիշատակել է այս նամակագրության մասին, սակայն բովանդակությանը չի անդրադարձել (տե՛ս* Ալ. Երիցեան, *նշ. աշխ., էջ 98)։*

[32] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 136, թ. 2բ։*

[33] Ալ. Երիցեան, *նշ. աշխ., էջ 98։*

Երեւանի խանին. «Բէհբուտեանք կրկնեալ իցեն զսարդարն, որ չէ այժմ բարեկամ իմ», եւ շարունակում է. «....ոչ գո կարծիք, զի նա հարկադրէ զնորին Սրբազանութիւնն ի կատարումն կամաց Բէհբուտեանց»[34]։ Ահա թե ինչու էր հրատապ Ալ. Գոլիցինի միջամտությունը։

Ներսես Աշտարակեցին մեկ այլ նամակ էլ գրել է 1816 թ. օգոստոսի 16-ին՝ նոր մանրամասնություններ ներկայացնելով համայնքի հոգեւոր գործերում տիրող ոչ բարվոք վիճակի վերաբերյալ։ Նա գրում է. «Գտանին աստ ի քաղաքի կարծիմ աւելի քան զ10 պսակաւ ունեցող զկրկին կանայս, որք առանց եկեղեցական իրաւանց եւ ընդդէմ կանոնաց հայոց թողեալ զառաջինն պսակեալին ընդ այլում»[35]։ Այդ անկանոն երեւույթը, փաստորեն, տարածված էր համայնքում, ինչը, սակայն, անընդունելի էր թեմակալի համար։ Բայց միայն այդ հարցում չէ, որ համայնքն ընդդիմանում էր։ Կրթության եւ լուսավորության գործում, ինչպես հայտնի է, Ներսես Աշտարակեցին հեռուն նայող նպատակներ ուներ, եւ այդ նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցների հայթայթմանն ուղղված քայլերին եւս, ինչպես երեւում է, դիմադրություն են ցույց տվել վիրահայերը. «Ես ի բաց մոռացեալ հարկաւորսն վասն անձին իմոյ խնդրեցի յիշխանաց մեծս բանողաց ի վերայ իմ, զի ամենայն հարուստ տունքն ժողովրդեան իմոյ վիճակի տացին մի մի մանէթ արծաթ, ըստ իրաքանչիւր տանն միանգամ միայն եւ ես խոստացայ, զի ի Ռուսաստանէ, ի Հնդկաստանէ եւ յօսմանցւոց պատրաստեցից ի վերայ գումարելոցն յինքեանց 30 հազար ռուբլի մանէթ յաղագս կառուցանելոյ զհիմնաւոր ուսումնարան մանկանց հասարակութեան հայոց ի լեզու հայոց եւ ռուսաց», եւ գտնում է, որ «....մեծ պատճառ թշնամութեան ընդ իմ այս արարին ազգասէր հակառակորդքն իմ»[36]։ Այդպիսով՝ կրթական հարցերում եւս Ներսես Աշտարակեցին ցանկանում էր Հ. Արարատյանի միջնորդությամբ ապահովել Ալ. Գոլիցինի աջակցությունը։

Նշենք, որ ռուսահայ իրականությանն առնչվող այդ կարեւոր հարցը չէր կարող չզբաղեցնել Լազարյանների ուշադրությունը, իսկ Ներսես Աշտարակեցին չէր կարող զանց առնել նրանց աջակցությունն ստանալու հնարավորությունը[37]։ Ուշագրավ է Բեհբությանների հետ հակամարտու-

---

[34] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 136, թ. 4ա։*
[35] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 141, թ. 1ա։*
[36] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 141, թ. 1ա-1բ։*
[37] Ալ. ԵՐԻՑԵԱՆ, *նշ. աշխ., էջ 126։*

թյան հանգուցալուծմանը վերաբերող՝ 1817 թ. մայիսի 4-ի Ներսես Աշտարակեցու նամակը՝ ուղղված Լազարյաններին։ Նախ կարեւորն այն է, որ Լազարյանները, փաստորեն, թեմակալից ակնկալել են անցյալում թողնել հակասությունները։ Ընդսմին՝ նամակում, հանգամանալից անդրադառնալով իրավիճակին, Ներսես Աշտարակեցին, կարծես, ընդառաջ է գնում Լազարյանների առաջարկած «խաղաղությանը», ավելին՝ վստահեցնում է, որ ինքն ի սկզբանե է խաղաղություն ցանկացել եւ ոչ պարզապես խոսքով, այլեւ իր քայլերով եւ դրա համար ամեն ջանք գործադրել է, թեեւ դրանք ապարդյուն են եղել. «Աշխատեցայ միշտ եւ ոչ կարողացայ համոզել զկամս Բեհբուտեանց ի փոյթ խաղաղութեան»[38]։ Նա գրում է նաեւ, որ զուր էին միջնորդությամբ հաշտվելու փորձերը. «Զկնի առեալ ընդ իս զսրբազան Վառլամ մետրապոլիտն վրաց՝ տարայ առ դարձի Բէհբուտեան միջնորդ խաղաղութեան եւ ոչ նովաւ զնա կարողացայց համոզել»[39]։ Տեղական իշխանություններին դիմելը եւս անարդյունք էր. «.... ապա առաքեցի զկուսակալ Ռտիշչեւն, եւ ոչ նա զօրեաց զնա համոզել»[40]։ Թեմակալը նամակում տեղեկացնում է նաեւ, որ իրավիճակը փոխվել է Կովկասի նոր կառավարչապետի նշանակմամբ. «Նոր կուսակալ Ալէքսեյ Պետրովիչ Երմոլովն անձամբ զփոյթ կալեալ քննութիւն, անտէն ի սեփհական տան իւրում կարգադրեալ զկամիսեայ»[41], ինչի արդյունքում՝ «....ի 16 ամսեան ապրիլի ընկալաւ պոլիցիայն ի Բէհբուտեանց եւս եւ յայլոց յամենեցունց զձեռագրութիւնս յաղագս ոչ խառնելոյ այսուհետեւ ի գործս պատկանեալն հոգեւորականութեան»[42]։ Սակայն միայն այդ հարցում չէ, որ Ներսես Աշտարակեցին օգտվել է գեներալի բարեհաճությունից։ Ինչպես երեւում է, նրա մտահոգությունն է եղել նաեւ հովանավորություն ստանալ Մայր Աթոռի համար[43]։ Այդ մասին նույնպես նա տեղեկացնում Հ. Լազարյանին՝ գրելով, որ «....ինքն մեզ աստ խոստացաւ խօսել ընդ շահին՝ վասն ազատ եւ ապահով պահպանութեան Աթոռոյն»[44]։

---

[38] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 164, թ. 1բ։*

[39] *Անդ։*

[40] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 164, թ. 2ա։*

[41] *Անդ։*

[42] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 164, թ. 2բ։*

[43] *1817 թ. Ա. Պ. Երմոլովի գլխավորությամբ ռուսական դեսպանություն է մեկնում Պարսկաստան՝ սահմանային վիճելի հարցերի շուրջ բանակցություններ վարելու եւ համաձայնության գալու նպատակով։*

[44] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 164, թ. 3ա։*

Նամակի վերջին տողերից պարզ է դառնում, որ Ներսես Աշտարակեցին խաղաղություն հաստատելուց հետո իր ամբողջ ուշադրությունը ցանկանում էր կենտրոնացնել ուսումնարան հիմնելու գործի վրա, թեպետ պետք է նշել, որ այդ կարեւոր նպատակի վերաբերյալ նա Լազարյաններին տեղեկացրել էր դեռ շատ ավելի վաղ՝ 1815 թ. հունիսին[45]։ Սակայն մինչեւ դա իրականություն կդառնար, նա ուսանողների է երաշխավորում Լազարյան ճեմարանի համար[46]։

Կարող ենք, իհարկե, Բեհբությունների հետ պայքարում արձանագրել Ներսես Աշտարակեցու հաղթությունը, սակայն խնդրահարույց էր մնում մի կարեւոր հարց. ինչ ուղիով պետք է ընթանային հետագա զարգացումները թեմում։ Այդ տեսանկյունից կարեւոր է 1817 թ. հուլիսի 13-ին Հ. Լազարյանին ուղղված նամակը, որում Ներսես Աշտարակեցին բացահայտում է իր բուն մտադրությունները, որոնք, փաստորեն, միտված էին միայն խաղաղություն հաստատելուն։ Ավելին՝ թեմական առաջնորդը գրում է, որ իր համար անընդունելի է որեւէ վրեժխնդրություն. «....յաղագս կենցաղավարութեան իմոյ ընդ իմոց հակառակորդաց լերուք քաջագէտ, զի չեմ ես վրէժխնդիր ոք կամ ատեցող կամ ոխակալ»[47]։ Հետեւաբար նա ոչ միայն հաշտ դիրք բռնելու խոստում է տալիս Հ. Լազարյանին, այլեւ համագործակցության պատրաստակամություն է հայտնում. «....եւ թէ հանդիպեսցի կարիք ամենայն յօժարութեամբ նաեւ զամենայն բարերարութիւն ոչ խնայիմ»[48]։ Կարծում ենք, որ թեմական այդ մոտեցումը պայմանավորված էր նոր ուսումնարանի կառուցման գաղափարով, որի համար անհրաժեշտ էին ինչպես միջոցներ, այնպես էլ համայնքի աջակցությունը եւ մասնակցությունը։ Բայց, ինչպես երեւում է, այդ հարցում խոչընդոտները դեռեւս շատ էին։ Այդ առումով բնութագրական է թեմական առաջնորդի հետեւյալ միտքը. «Իմ ուսումնարանն, ի շնորհաց արգելողացն, տակաւին ի միտս իմ գտանի հիմնեալ»[49]։

Այն մասին, որ Ներսես Աշտարակեցու՝ խաղաղություն հաստատելու վերաբերյալ հավաստիացումները պարզապես խոսքեր չէին, եւ նա որոշակի ջանքեր է գործադրել հաշտվելու ազդեցիկ Բեհբություններ-

[45] ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 88։

[46] ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 164, թ. 3բ։

[47] ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 169, թ. 1ա։

[48] Անդ։

[49] ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 169, թ. 1ա։ Զարմանալիորեն Ալ. Երիցյանը այս տեղեկության տարեթիվը նշում է 1818 թ. (տե՛ս Ալ. ԵՐԻՑԵԱՆ, նշ. աշխ., էջ 154–155)։

րի հետ, վկայում են արխիվային վավերագրերը։ Այդ տեսանկյունից բավարար է միայն ծանոթանալ Հովսեփ Բեհբությանին ուղղված նրա նամակին։ 1816 թ. օգոստոսի 11-ին, այսինքն՝ երբ հակասությունները կիզակետում էին, թեմակալը փորձել է երկխոսության մեջ մտնել՝ պարզաբանելու համար, որ իր դեմ անհիմն մեղադրանքներ են տարածվում. «Լսեմ եմ, թէ ի մէջ անուականաց քաղաքիս հռչակեալ են ձայն, որպէս թէ ես մինիստրաց ոմանց կամ վեհազնեայ աղայ Յովակիմ Եղիազարեանին գրեալ իցեմ զգիր եւ անիծեալ եմ զհետեւողութիւն, որպէս թէ ազգն հայոց չլինիցի ճորտ ու մեք եւ իբրեւ թէ վասն այսմ պատճառի վիրաւորել գտանին»[50]։ Սակայն եթե նույնիսկ այդպես էր, եւ այդ ուղղությամբ թեմակալն ինչ-ինչ քայլեր էր ձեռնարկել, ապա, մերօրյա պատկերացումներով իհարկե, դա բացառապես վկայում է Ներսես Աշտարակեցու առաջադեմ հայացքների մասին։ Սակայն հարցը մնում է առկախ. կարո՞ղ էր արդյոք իրատեսական այդ գործիչը ցարական ճորտատիրական համակարգի առկայության պայմաններում նման մտադրություն ունենալ։ Կարծում ենք, որ հավանականությունը փոքր է։ Դա է վկայում նաեւ Ներսես Աշտարակեցու զարմանքը, երբ նա գրում է, թե ինչպես է հնարավոր, որ «....զազգն իւրեանց (ռուսաց.— Հ. Ս.) թողուլ ի մէջ ճորտութեան հայոց եւ զազգն հայոց հանել ի ճորտութենէ ռուսաց, վրաց եւ հայոց»[51]։

Դ. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻ ԽԱՆԻՆ

Ինչպես երեւում է, Բեհբությանների հետ պայքարն այնպիսի զարգացումներ է ունեցել, որ Ներսես Աշտարակեցին ստիպված էր ջանքեր գործադրել Երեւանի խանի միջամտությունը կանխելու եւ մինչեւ անգամ՝ նրա բարեհաճությունն ստանալու համար, թեեւ հայտնի է նրա ռուսամետ կողմնորոշման մասին։ Ինչպես արդեն նշել ենք, նա արդարացի մտավախություն ուներ, որ իր դեմ միջնորդություններ են ներկայացվում Երեւանի խանին[52]։ Բեհբությանների նպատակը պարզ էր. օգտագործել խանի իշխանությունը, որպեսզի Եփրեմ կաթողիկոսը պաշտոնից

[50] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 138, թ. 1ա։*
[51] *Անդ։*
[52] Ալ. ԵՐԻՑԵԱՆ, *նշ. աշխ., էջ 103։*

հեռացնի թեմակալին։ Հանգամանքների վերաբերյալ կարելի է եզրակացություններ անել Երեւանի խանին ուղղված Ներսես Աշտարակեցու նամակից, որը նա գրել է 1816 թ. նոյեմբերի 31-ին[53]։

Դիտարկենք նամակում արծարծված կարեւոր փաստերը։ Նախ հեռատես հոգեւոր գործիչն իր երախտագիտությունն է հայտնում խանին, որ վերջինս այդքան բարեհաճ է գտնվել Վրաստանից վերադարձող հայերի նկատմամբ՝ գրելով. «....ահա՛ կամեցողքն ի ժողովրդեննէ էջմիածնի այժմ եկին եւ այլքն ամենայնիւ եւս արձակեալ գան ի գարնան յաջողմամբն Աստուծոյ»[54]։ Թեմակալ առաջնորդը հայ ազգաբնակչությանն աջակցելու նպատակով, իհարկե, իր գոհունակությունն է հայտնում իշխանությունների հովանավորության համար. «....եւ ես առաւել ուրախ եմ, վասն զի որպէս միշտ ի ժամանակս լինելոյ իմ ի ներքոյ բարերար հովանաւորութեան Ձեր»[55]։ Անդրադառնալով այն հարցին, որ իր դեմ զրպարտություններ են տարածվում, նա հավաստիացնում է, որ «....երբէք ես առաջի Ձեր կամ առաջի պարսից տերութեան ամենայն կառավարչաց ստութեամբ եւ անհարազատութեամբ չեմ վարեցեալ ոչ ինչ կերպիւ»[56]։ Պետք է նշել, որ Ներսես Աշտարակեցու այդ ջանքերն անտեղին չէին, քանի որ, թեեւ իր առաջնորդած Վիրահայոց թեմը ռուսական տիրույթում էր, սակայն Մայր Աթոռը շարունակում էր գտնվել պարսկական տիրապետության սահմաններում, իսկ վերջիններիս միջամտությունը կարող էր եւ որոշիչ լինել իր պաշտոնավարման հարցում։

Նկատենք, որ հստակ պատկերացնելով այդ իրողությունը՝ թեմակալն ուրիշ ելք չի ունենում, քան դիվանագիտորեն շրջանցել ռուսական իշխանությունների հետ ունեցած լավ հարաբերությունների հանգամանքը։ Դրա համար նա փորձում է այլ տեսանկյունից մոտենալ հարցին՝ հիմնովին փարատելու համար պարսից պաշտոնյայի որեւէ կասկած. «....լաւապէս միամիտ լե՛ր, որ թէ ես կարողանամ Աթոռոյ աղագաւ արդիւնք ստանալ, չէ կարելի, որ ես Աթոռն զրկեմ եւ իմ անձն շահիմ միայն»[57]։ Իսկ իր դեմ ուղղված մեղադրանքները Ներսես Աշտարակեցին համարում է անհիմն բամբասանք, ինչը, ըստ նրա, չպետք է ան-

---

[53] *Այդ ժամանակ Երեւանի խանն էր Հուսեյն խան Ղաջարը (1807–1827)։*
[54] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 152, թ. 1ա։*
[55] *Անդ։*
[56] *Անդ։*
[57] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 152, թ. 1բ։*

գամ արժանի լինի պարսից խանի ուշադրությանը. «Անբախտ եմ, որ իմ ճշմարտութեան մէջն վերստին բամբասողաց բամբասանքն լսում է Ձեր իմաստուն ականջն, առաւել անբախտութիւն իմ այն է, որ լռելյայն զկնի հաւատ եւս կամենում է ընծայել բամբասողաց իմոց եւ զիս յետ հազար անգամ փորձելոյն ի մէջ իմ անշարժ հաւատարմութիւնն դարձեալ մեղադրութիւն է արժանացուցանում»[58]։ Վերջում թեմակալը նրբանկատորեն փորձում է ապավինել խանի հովանավորությանը՝ նամակը եզրափակելով հետեւյալ տողով. «....Ձեր խնամքն եւս չպակասեցէ ինձ»[59]։

Հաշվի առնելով այն, որ պարսկական իշխանություններն առանձնապես շահագրգռվածություն չունեին այդ հարցում, կարելի է ենթադրել, որ այս նամակը դրական է ընդունվել Երեւանի խանի կողմից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով նշենք, որ Մատենադարանի արխիվային վավերագրերը կարեւոր հանգամանքներ են բացահայտում այն մասին, թե Ներսես Աշտարակեցին ինչպիսի գործուն քայլերի է դիմել Բեհբությունների հետ հակամարտությունը լուծելու եւ համայնքի պառակտումը վերացնելու ուղղությամբ։ Դրա նպատակը թեմի առաջնորդի համար ինքնուրույնության ապահովումն էր ինչպես հոգեւոր գործերում, այնպես էլ եկամուտների տնօրինման հարցում։ Վերջին իրողությունը, կարծում ենք, կարեւոր եւ նպաստավոր դեր է կատարել տարիներ անց Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի հիմնադրման գործում։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մատենադարան, Ալեքսանդր Երիցյանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թիֆլիսահայ համայնք, եկեղեցական հասույթներ, Ներսես Աշտարակեցու նամակները, Կովկասի կառավարչապետ, Լազարյաններ, ռուսահայ գործիչներ:

---

[58] *Անդ։*

[59] *Անդ, թ. 2ա։*

РЕЗЮМЕ

Противостояние предводителя Грузинской епархии Армянской Апостольской Церкви Нерсеса Аштаракеци (1814–1828., с 1843 по 1857 – Верховный Патриарх и Католикос всех Армян) и влиятельной семьи тифлисских армян – князей Бейбутянов – имело значительное отражение в жизни современных им армян, а решение данного противостояния имело важнейшее значение для армянской общины. Документы в архивах Матенадарана, в которых представлены богатые источниковедческие документальные материалы, выявляют ряд новых обстоятельств, касающихся данного противостояния, дают важные сведения из первоисточников относительно данного вопроса и дополняют общую картину противостояния.

Исследование писем, адресованных Католикосу всех Армян Епрему I Дзорагехци, главнокомандующему Николаю Ртищеву, русско-армянским деятелям Арутюну Араратяну и Екиму (Овакиму) Лазареву, также как и Ереванскому хану Хусейну, выявляет активные усилия Нерсеса Аштаракеци, целью которых являлось стремление упорядочить дела епархии, устранить противостояние и привести епархию к миру. На этом непростом пути предводителю удалось преодолеть многочисленные препятствия, даже опасность для своей жизни.

Именно вследствие подобных действий предводитель Грузинской епархии Армянской Апостольской Церкви приобретает самостоятельность в управлении духовных вопросов и в расходовании денежных средств епархии. Последнее обстоятельство через года сыграло очень важную и значительную роль в процессе основания знаменитой Нерсисянской школы в Тифлисе.

SUMMARY

The conflict between Nerses of Ashtarak (1814–1828, Catholicos of All Armenians 1843–1857), Primate of the Armenian Diocese of Georgia, and Behboutians, the influential family of Tiflis Armenians, had a vast impact on the Armenian reality of the time, and the solution of this confrontation was of paramount importance for the Armenian community.

The documents in the archives of Matenadaran, which present rich source documentary materials, reveal a number of new circumstances regarding this

confrontation, provide important information from primary sources regarding this issue and complement the overall picture of the confrontation.

The study of letters addressed to the Catholicos of All Armenians Yeprem I of Dzoragegh, the Russian governor Nikolay Rtishchev, the Russian-Armenian figures Harutyun Araratyan and Hovakim Lazaryan, and Huseyn Khan of Yerevan, reveals the active efforts of Nerses o Ashtarak, who also aimed to regulate spiritual affairs through reforms, eliminate confrontation and bring the diocese to peace. On this difficult path, the Primate of the Diocese overcame many obstacles, up to the danger threatening his life.

Nevertheless, thanks to these activities, the Primate of the Armenian Diocese of Georgia attained independence in the management of spiritual affairs and in the administration of the Diocese's funds. The latter circumstance years later played a very important and significant role in the process of founding the famous Nersisyan School in Tiflis.